ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАНА

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

N 204

«21» 12 2020թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 7 նիստի որոշումները:

Առդիր՝ 20 թերթ

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ
ԹԻՎ 29 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՆԻՍՏԻ

29.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի, ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

30-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 61-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

31-Ն.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

32.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱ-ՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓ՝ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

33.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱ-ՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

34.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԹԻՎ 01-63 ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

35.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ 0-ԻՑ 10 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՄԱՆՈՐՅԱ ՆՎԵՐՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

36.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

37.2020ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՆՁԱՁԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

38.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂՂԱՐ՝ Ա. ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2020թվական թիվ 29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1.Հաստատել՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 17-ի, թիվ 7 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	3 կողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Եղիգարյան			
Թ. Ջանգիրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական դեկտեմբերի 17
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2020թվական թիվ 30-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 61-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 17 դեկտեմբերի 2020թվականի թիվ 06/27.1/26524-20 փորձագիտական եզրակացությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի 2020թվականի բյուջեն հաստատելու մասին» N 61-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն թիվ 1-4 հավելվածների:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ	3 կողմ	0 դեմ	0 ձեռնպահ
Հ. Եդիգարյան			
Թ. Ջանգիրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական դեկտեմբերի 17
Մրգաստան համայնք

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 61-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 61-Ն որոշման մեջ կատարվել են հետևյալ փոփոխությունները:

Հատկացված՝ 137.9 հազար դրամ, դրամաշնորհը ավելացվել է բյուջեի՝ 1256 տողում, COVID 19-ով պայմանավորված՝ 25 անձանց, սննդամթերք և սանիհիգենիկ պարագաներ տրամադրելու համար:

Աշխատակազմին տարեվերջին պարգևատրելու համար, 4112 հոդվածին ավելացվել է 1719.0 հազար դրամ:

Երեխաներին ամանորյա նվերներ, ինչպես նաև ծաղկեպսակներ ձեռք բերելու նպատակով, /ներկայացուցչական ծախեր/ 4237 հոդվածին ավելացվել է 339,5 հազար դրամ:

Սոցիալական վճարների ֆոնդին ավելացվել է՝ 100.0 հազար դրամ, անապահով ընտանիքներին դրամական աջակցություն տրամադրելու համար:

2020թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 61-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, որոշման նախագծի ընդունումը պայմանվորված է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հ. Հ. օրենքի հոդված 18-ի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով, քանի որ համայնքի բյուջեն տեղական ինքնակառավարման մարմնի՝ սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար, անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագիրն է, այն ուղղված է համայնքի զարգացմանը նպաստելուն:Միաժամանակ կնպաստի բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքներին, բյուջետային դասակարգմանը, հաշվառմանը և հաշվետվության միասնական մեթոդաբանությանը, ինչպես նաև համայնքապետարանի բնականոն աշխատանքների կազմակերպմանը:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2020թվական թիվ 31-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
2021ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 2020թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 06/27.1/28398-2020 գրությամբ պետական փորձագիտական եզրակացությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի վարչական տարածքում 2021թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ 2021թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ	Յկողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Եդիգարյան			
Թ. Ջանգիրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական դեկտեմբերի 17
Մրգաստան համայնք

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի
ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ԹԻՎ 31-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա.հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **7500 դրամ,**

բ.սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **3500 դրամ,**
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **12500 դրամ,**
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար **12500 դրամ,**
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար **25000 դրամ,**

գ.ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **750 դրամ,**
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **1250 դրամ.**

2.համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

2.1)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **750 դրամ,**

2.2)բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի <<1-ին>> ենթակետի <<ա>> պարբերությունով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված

նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

2.3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3.համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 2000 դրամ.

4.Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույքաչափերը հաշվարկված են «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներում առկա 0.5 գործակիցի կիրառմամբ

4.1համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ **45 000 դրամ.**

5.համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 170 000 դրամ.

5.1համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ **16100 դրամ**

5.2համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **6000 դրամ.**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **10000 դրամ**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **15000դրամ.**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **20000 դրամ.**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **25000 դրամ**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **30000 դրամ**

6. համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

6.1 առևտրի օբյեկտների համար՝ **1700 դրամ.**

6.2 հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **8400 դրամ.**

6.3բաղնիքների (սաունաների) համար՝ **67000 դրամ.**

6.4 խաղատների համար՝ **167000 դրամ.**

6.5 շահումով խաղերի համար՝**84000 դրամ.**

6.6 վիճակախաղերի համար՝ **34000 դրամ.**

7.համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

7.1 հիմնական շինությունների ներսում

7.1.1 մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **4500 դրամ.**

7.1.2 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **6000 դրամ.**

7.1.3 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **7000 դրամ.**

7.1.4 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **8400 դրամ.**

7.1.5 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **10000 դրամ.**

7.1.6 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **10000 դրամ.**

7.2 ոչ հիմնական շինությունների ներսում՝

7.2.2 մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **170 դրամ.**

7.2.3 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **340 դրամ.**

7.2.4 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **670 դրամ.**

8.2.5 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1340 դրամ.**

7.2.6 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2700 դրամ.**

7.2.7 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **5000 դրամ.**

8.Ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

8.1 ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **700 դրամ.**

8.2 թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **1200 դրամ.**

8.3 սոցիալական գովազդի համար՝ **0 դրամ.**

8.4 այլ արտաքին գովազդի համար՝ **500 դրամ.**

8.5 դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար **սահմանված տուրքի 25 %-ի չափով.**

8.6 եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար **սահմանված տուրքի 10 %-ի չափով:**

9.Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 200 000 դրամ:

10.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

10.1 շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **1000 դրամ.**

10.2 ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդթվում՝ դրանցվերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդի-ականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **2000 դրամ.**

10.3ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **2000 դրամ.**

10.4 համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի(փաթեթի)նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **2000 դրամ .**

10.5 համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **1000 դրամ.**

10.6 համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

10.7 համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ՝ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար՝ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում հաստատվում է համայնքի ավագանու կողմից.

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար մինչև 100 դրամ փոխհատուցման վճար.

12.Աղբահանության վճարը սահմանվում է՝

12.1 կենցաղային աղբի համար՝ անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական **100 դրամ.**

12.2 ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

12.3 ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ **3000 դրամ**

12.4 ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ **5000 դրամ:**

13.Առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 200 դրամ,

13.1արտադրական, արդյունաբերական և գրասենյակային շինությունների մասով՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 15 դրամ**

13.2կրթական, մշակութային, և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ **մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 10 դրամ:**

13.3 Սույն հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի , գ, դ, զ կետերի դրույքաչափերը, բացառությամբ 'ե' կետի հաշվարկված են «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներում առկա 0.5 գործակցի կիրառմամբ:

14.Համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների համար.

14.1 տարածքի ախտահանություն **1քառ. մետր 200-300դրամ**

14.2 կրծողների ոչնչացում /դեռատիզացիա / **1քառ. մետր 200-300դրամ**

14.3 կենդանիների նախասպանդային զննում **1000-2000դրամ** կախված կենդանու տեսակից

14.4 Հայաստանի Հանրապետության տարածքում փոխադրվող անասնաբուժական պետական վերահսկողության ենթակա ապրանքների համար անասնաբուժական ուղեկցող փաստաթղթի տրամադրման համար՝ **1000 դրամ:**

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2020թվական թիվ 32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի վարձատրության չափ սահմանել՝ 260 000 /երկու հարյուր վաթսուն հազար/ դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ 3 կողմ Օդեմ 0 ձեռնպահ

Հ. Եդիգարյան
Թ. Ջանգիրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական դեկտեմբերի 17
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2020թվական թիվ 33

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի 1-ին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ 2021թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ	3 կողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Եդիգարյան			
Թ. Ջանգիրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական դեկտեմբերի 17
Մրգաստան համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի
ավագանու 2020թվականի դեկտեմբերի 17-ի
թիվ 7 նիստի, թիվ 33 որոշում

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի
ավագանու 2019թվականի նոյեմբերի 27-ի
թիվ 9 նիստի, թիվ 51 որոշում

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների քվաքանակը՝ 11
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

հ/հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱԶ. ԴՐԱՄ
1	Համայնքի ղեկավար	1	260,0
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	200,2
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
3	Աշխատակազմի քարտուղար	1	205,0
4	Առաջատար մասնագետ	3	185,0
5	I կարգի մասնագետ	2	163,0
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
6	Վարորդ	1	143,0
7	Պահակ	1	102,3
8	Հավաքարար	1	102,3
Ընդամենը՝		11	1893,8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2020թվական թիվ 34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԹԻՎ 01-63 ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի և «Էջմիածին քաղաքի Բնակարանային կոմունալ վարչություն» բյուջետային հիմնարկի հետ, կնքված թիվ 01-63 պայմանագիրը՝ համաձայն հավելվածի:
2.Հաստատել՝ համայնքի սանիտարական մաքրման սխեմայի նախագիծը համաձայն հավելվածի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ	3 կողմ	Օդեմ	0 ձեռնպահ

Հ. Եդիգարյան
Թ. Ջանգիրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական դեկտեմբերի 17
Մրգաստան համայնք

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01-63

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ

ք. Էջմիածին «01» ՀՈՒՆՎԱՐ 2021Թ.

Էջմիածին քաղաքի «Բնակարանային կոմունալ վարչություն» բյուջետային հիմնարկը, /հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ավագանու 17.12.2019թ. նիստ թիվ 15 որոշում թիվ 147-Ն որոշումը/,ի դեմս վարչության պետ՝ Ա.Մելքոնյանի /հասցեն՝ ք. Էջմիածին Մ.Մաշտոց 0 շենք/, որը գործում է ըստ Կանոնադրության, այսուհետ՝ «Կատարող» մի կողմից և Արմավիրի մարզի Էջմիածին համայքի Մրգաստանի գյուղապետարանի, ի դեմս գյուղապետ՝ Ռաֆիկ Խաչատրյանի հետագայում, «Պատվիրատու»,մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 « Պատվիրատուն» հանձնարարում է , իսկ Կատարողը» պարտավորվում է իր փոխադրական միջոցներով տեղափոխել «Պատվիրատուի» կենցաղային աղբը և արտադրական թափոնները:

1.2 «Պատվիրատուն» պարտավորվում է մատուցված ծառայության դիմաց «Կատարողին» վճարել իր կողմից գբաղեցրած տարածքի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ամսական 130 /հարյուր երեսուն/ դրամի չափով վճար:

1.3 Սույն պայմանագրի գինը կազմում է 780 000դրամ /Յոթ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրա Ամսական վճարը կազմում է 10 000 դրամ X 6.5տ = 65 000դրամ:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1 «Կատարողը» պարտավոր է՝

ա/ կենցաղային աղբի և արտադրական թափոնների տեղափոխման աշխատանքները կատարել «Պատվիրատուի» հետ համաձայնեցված գրաֆիկով՝ շաբաթական _____ անգամ ,

բ/ աշխատանքները կատարել իր միջոցներով և աշխատուժով,

գ/ աղբի տեղափոխման աշխատանքները կատարել ժամանակին.

դ/ աղբահանության համար սահմանված վճարի փոփոխության դեպքում 15 օր առաջ զանգվածա լրատվության միջոցներով տեղեկացնել «Պատվիրատուին»:

2.2 «Պատվիրատուն» պարտավոր է՝

ա/ «Կատարողի» մատուցված ծառայության դիմաց վճարել սույն պայմանագրի 1.3-րդ կետում նշված գնին համապատասխան:

բ/ վճարումը կատարել յուրաքանչյուր ամիսը / եռամսյակը / մեկ անգամ՝ կանխիկ մուծման կամ բանկային փոխանցման միջոցով «Կատարողի» 900325151620 հաշվարկային հաշվին:

2.3 «Պատվիրատուն» իրավունք ունի՝

«Կատարողի» կողմից աղբահանությունը չկատարելու դեպքում չվճարել հաշվետու ժամանակահատվածի աղբահանության վճարը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով «Կատարողին» ;

2.4 «Կատարողը» իրավունք ունի

ա/ «Պատվիրատուի» կողմից վճարումները ժամանակին չկատարելու դեպքում դադարեցնել աղբահանումը և այն վերսկսել վճարումից հետո:

3.<<Պատասխանատվություն>> վճարը չվճարելու դեպքում

3.1<<Պատվիրատուն>> աղբահանության վճարի վճարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետ ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքնչյուր օրվա համար վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.072 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

4. Այլ պայմաններ

4.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 01.01.2022թ.

4.2. Սույն պայմանագրի որևէ կետի փոփոխություն կատարվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

4.3 Կողմերից մեկի նախաձեռնությամբ պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու համար նախաձեռնող կողմը պարտավորվում է 3 օր առաջ գրավոր տեղյակ պահել մյուս կողմին:

4.4 Պայմանագիրը կազմված է 2 /երկու/ օրինակից մեկական օրինակ տրվում է կողմերին, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

4.Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«ԿԱՏԱՐՈՂ»

Անվանումը- ԷՋՄԻԱԾՆԻ << ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ >>

հացեն - ք. էջմիածին Մ.Մաշտոց 0

բանկը – Տեղ. գանձապետական բաժ.

Հ/Հ - 900325151620

ՀՎՀՀ - 04716461

հեռ. 5-36-63/777

ՊԵՏ Ա.ՄԵԼՔՈՆՅԱՆ

/ ստորագրություն /

Կ.Տ.

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»

Անվանումը- Մրգաստանի գյուղապետարան

հասցեն - գ. Մրգաստան

բանկը - <<ԱՇԲ>> բանկ

Հ/Հ - 900322433021

ՀՎՀՀ - 04703556

հեռ. - 6-38-10

ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

/ ստորագրություն /

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի
ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ, ԹԻՎ 34 ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱ՝ 2021ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1.Կնքել պայմանագիր՝ «Էջմիածին քաղաքի Բնակարանային կոմունալ վարչություն» բյուջետային հիմնարկի հետ:
2.Կատարողին հանձնարարել՝ իր փոխադրամիջոցով տեղափոխել Մրգաստան համայնքում գոյացած կենցաղային աղբը և շինարարական թափոնները:
3.Աղբահանությունը կատարել՝ նախապես համաձայնեցված գրաֆիկով, շաբաթական 2 անգամ:
4.Աշխատանքները կատարել՝ իրենց միջոցներով և աշխատուժով:
5.Աղբի տեղափոխման աշխատանքները կատարել ժամանակին:
6.Նշված ծառայությունները կատարելու համար, պայմանագրի գին սահմանել՝ 780 000 /յոթ հարյուր ութսուն հազար/ դրամը:
7.Ամսեկան վճարը կազմում է 10 000դրամX6.5տ=65 000դրամ:
8.Կատարել վճարում՝ յուրաքանչյուր ամիս, բանկային փոխանցման եղանակով /համայնքի բյուջեի միջոցների հաշվին/:
9.Կնքել պայմանագիր՝ համայնքում գործող իրավաբանական անձանց հետ, կենցաղային աղբի տեղափոխման համար կատարվող վճարների վերաբերյալ՝ համաձայն «Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի» 2021թվականի համար:
10.Ապահովել աղբահանության /յուրաքանչյուր շունչը՝ 100 դրամ/, նախատեսված գումարների հավաքագրում համայնքի բնակիչներից:Այդ նպատակով նշված ծառայության կատարման գործընթացը դնել՝ համայնքային ծառայության առաջին կարգի կրտսեր պաշտոն զբաղեցնող զբաղեցնող /3.2-1 ծածկագրով/ աշխատակցի վրա և ամրագրել նշված պաշտոնի անձնագրում:
11.Համայնքի տարածքում տեղադրել՝ աղբամաններ:
12.Կազմակերպել շաբաթօրյակներ՝ «Մաքուր համայնք» խորագրով:
13.Շաբաթօրյակին մասնակից դարձնել՝ համայնքի բնակիչներին, շահագրգիռ բոլոր կազմակերպություններին և հանրային աշխատանքներում ներգրավվածներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի,
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2020թվական թիվ 35

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ 0-ԻՑ 10 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՄԱՆՈՐՅԱ ՆՎԵՐՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքում բնակվող 0-ից 10 տարեկան երեխաներին ամանորյա նվերներ ձեռք բերելու համար հատկացնել՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ:
2.Համայնքի ղեկավար՝ /Ռ. Խաչատրյանին/ իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	3 կողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Եդիգարյան			
Թ. Ջանգիրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական դեկտեմբերի 17
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ
«17» դեկտեմբերի 2020թվական թիվ 36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և նույն օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի պահանջներով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Համաձայնություն տալ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի տարածքում Գեորգի Պավելի Աբաջյանին, Աշոտ Կառլենի Ավետյանին սեփականության իրավունքով պատկանող 04-068-0111-0065 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 2.253հա. մակերեսով հողամասից՝ 1.0հա. փոխարինելու այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողամասի՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու համար:

2.Համաձայնություն տալ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի տարածքում Նշան Մայիսի Զաքարյանին, Լուսինե Ստյոպայի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող 04-068-0110-0005 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.7915հա. մակերեսով հողամասից՝ 0.4հա. փոխարինելու այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողամասի՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու համար:

3.«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	Ձայն կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հ. Եդիգարյան			
Թ. Զանգիրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական դեկտեմբերի 17
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2020թվական թիվ 37

2020ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1.2020թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմական գործողություններին համայնքի կողմից մասնակցած զինվորականներին հատկացնել՝ դրամական օգնություն համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 3 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ

Հ. Եդիգարյան
Թ. Ջանգիրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական դեկտեմբերի 17
Մրգաստան համայնք

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի
ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ, ԹԻՎ 37 ՈՐՈՇՄԱՆ

1.Արցախյան պատերազմում զոհված զին. ծառայող Հայկ Արթուրի Չիթչյանի հորը՝ Արթուր Գրիգորի Չիթչյանին հատկացնել՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ:

2.Արցախյան պատերազմի մասնակից հաշմանդամ զին. ծառայող Հրայր Սարգսի Ասատրյանի մորը՝ Գայանե Ռաֆիկի Պիջոյանին հատկացնել՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

3.Արցախյան պատերազմի մասնակից Արսեն Աշոտի Հարությունյանին հատկացնել՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ:

4.Արցախյան պատերազմի մասնակից Ավետիք Մկրտիչի Մուրադյանին հատկացնել՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ:

5.Արցախյան պատերազմի մասնակից Հրաչ Հասանի Ջանգիրյանին հատկացնել՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ:

6.Արցախյան պատերազմի մասնակից Թոռնիկ Անդրեի Ջանգիրյանին հատկացնել՝ 30 000 /երեսուն հազար/ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«17» դեկտեմբերի 2020թվական թիվ 38

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի Հայաստանի Հանրապետության հոդված 18-ի 1-ին մասի 11-րդ կետով,Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավար՝ Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանին աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար, խրախուսել կիրառելով միանվագ դրամական պարգևատրում՝ աշխատավարձի 100%-ի չափով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	3 կողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Եդիգարյան			
Թ. Ջանգիրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական դեկտեմբերի 17
Մրգաստան համայնք